ւխտենից բարութեանցն ընտրեալ հետեւէր, կեցեալ յանապատս ընդ արս ընտիրս ի[59] ճգնութիւնս մեծամեծս: Զորոյ և ոչ բաւական ոք է բանիւ բովանդակել զանբաւ վարուցն զառն նահատակութիւնն. այլ այսքան միայն ասացեալ՝ ծանուցուցուք զբանս, որպէս թէ պատճառանօք գոլով ի մարմնի, ազնութեամբ և պահօք և անդադար աղօթիւք զցայգ և զցերեկ միշտ հոգևոր անսպառ վաստակօք զանմարմնոցն զվերին զօրացն բերէր յանձին զքաղաքավարութիւն. որ ոչ երբէք ի կեանս իւրում ընտրեաց ժամ աղօթից, այլ զաւր և զգիշեր անհանգիստ նմա ժամ աղօթից էր: Եւ կեցեալ այսպէս, մինչեւ առաւելեալ ծաղկէր հեր գլխոյն սպիտակն քան զխարտէշն, և կատարեալ զընթացս նահատակութեան իւրոյ՝ հանգչէր: Եւ եդեալ ի մատրանն ի յԱգամակերտի[60]. որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչև ցայսօր և յաւիտեան, անուն սրբոյն յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, Վրաց և Աղուանից:

ժգ Եւ արդ յաջորդին[61] այսպիսի մահուս զերծեալ անձինք շահաժողով ընչասիրացն, և հասեալք ևեթ խնդրոյն տենչիցն՝ որում ուշ արարեալ բաղձան, մոռացեալ զվիշտն՝ բերկրեալ օգտիւքն զուարճանան. իսկ ո՞րչափ ևս առաւել գտանիցին գանձուն յաւիտենից ժառանգաւորք, որք[62]

ժդ և զյօրինուածս բանից սուգապատում կարգեալ պատմագրեցին, չառնել մարդահաճութեան բանից յաւելուածս՝ ի ցրումն ուկերաց, ըստ ասացուածի սաղմոսերգին, այլ զգուշական երկիւղին ընդ բազմաց լայնածաւալս[63] զխոհական բանի նուէցին անվթար՝ ի սուրբ Հոգւոյն շնորհաց յուսով ապաւինեալք. ունելով փոխանակ փայտամած տախտակացն՝ զհիմն ուղղափառ հաւատոյ, և փոխանակ ի նմա բազմայարմար կազմութեան հնարիցն՝ զերրեակ ինքնութեանն միութիւն, ըստ անբաժան սուրբ Երրորդութեանն: Եւ զի նաւացն տախտակք առանց բազմաց սատարելոյ չհնարին լինել յանօթ պիտանացու, քանի՞ ևս առաւել այսպիսի մեծ և հոգևոր գործոյ ձեռնարկութիւն, ուր բազում կարևոր պէտք էին[64] առաքինի արանց[65] օգնականութեան[66]:

ժե Ե. Եւ արդ՝ այսպէս հարկաւորեալ բռնադատեաց զտկարութիւնս մեր տէրն Մամիկոնէից Վահան, սպարապետն Հայոց և մարզպան, ձեռնարկել ի գործ՝ որ ի վեր[67] քան զկար գիտութեան մերոյ էր, քանզի ոչ էր[68] քան զբան[69]:

ժզ Զի ոչ փոքր ինչ կասկած է՝ աներկիւղապէս[70] ուրուք[71] տալ զանձն յայսպիսի վտանգս, ուր պիտոյ են յարմարութիւնք բանից, որոշեալ կարգադրութիւնք ըստ հրամանի կանոնեալ գիտութեանն, բերել պատկառելով ստուգագրութիւն անպարսաւ յականջս իմաստասէր լսողաց. չյաւելուլ զանեղեալսն յընդունայն աճմունս բանից. չնուազեցուցանել զեղեալսն եւ

59. Մեր Ա, Բ օր. և Ա տպ. «և»,
60. Տփղ. տպ. «ի Հագամակերտի»,
61. Գ. տպ. և Սք. Պարոնեան միայն «ողորմի փութով»էն վերջ կը դնեն «Եւ արդ յաջորդին այսպիսի» հատուածը, Ձեռագրաց և ուրիշ բանասիրաց հետեւեցանք,
62. Սք. Պար. հոս 4–5 տող ի բաց կը թողու, և կը գրէ «որք զզուշական երկիւղին», Թերեւս տպագրական վրիպակ մ'ըլլայ,
63. Բ, Գ տպպ. ծանօթութեամբ կը գրեն «թուի լայնածաւալ ծովս»,
64. Սք.Պարոնեան (բանասէր 1899, էջ 271) «և», Թողինք ըստ ձձ.,
65. Սք. Պր. գուցէ տպագրական սխալով մը, ունի՝ «արանց առաքինութեան» կրկնաբանութիւն է,
66. Մեր ձձ. և տպպ. օր. «օգնականութեան. կալ ումանց», Նոր. Բիւզ. Տփղ. տպ. «օգնականութեան. զի ոչ փոքր», Սք. Պար. «առաքինութեան (իմա՝ օգնականութեան), Եւ վասն զի են ստտ», Հ. Լեւոն «օգնականութեան, Որում արթնամիտ խորհրդականութեամբ», Ամենքն ալ անճիշդ. միայն Ն. Մատաթեան կը թուի ենթադրել «օգնութեան, Եւ արդ այսպէս հարկաւորեալ», և այս լաւ է,
67. Ասկէ անդին Նոր. Բիւզ. (և Տփղ. տպ.) շատ խառնաշփոթ ոճով կը ներկայացնեն այդ մասը, Մենք ձձ. և Ա, Բ, Գ տպագրաց յստակ ոճին հետեւեցանք,
68. Տփղ. տպ. հակառակ բոլոր ձձ. և տպպ. օրինակաց, և Նոր. Բիւզանդացւոյն, կը գրէ «քանզի էր»,
69. Նոր. Բիւզ. և Տփղ. տպ. հոս պակաս մը կ'ենթադրէ, որուն ձայնակից չենք, իսկ Տփղ. տպ. յաւէտ անուշադրութեամբ՝ ունի «քան զքան»,
70. Բոլոր տպպ. «աներկիւղ», Ուղղեցինք ըստ մեր Ա և Բ ձեռագրաց,
71. Ձեռագիր ու տպպ. օրինակք կը գրեն «ումեք», Ուղղեցինք ըստ Գ տպ.,



կարճակտուր պատմել, բանիւք անփութութեամբ. այլ զընթաց ողջախոհ զգուշութեամբ բերել ի յայտնութիւն: Եւ վասն զի են ստ պէտք բազում երկիւղածին պատրաստութեան[72],

ժէ արդ[73] նպաստեալ[74] խմում տկար խորհրդոյս, աղաչեմ սատարեցէք ամենայն աղօթասէր անձինք, ձեռովք առ Աստուած խնդրուածովք օգնականութեամբք. որովք արդարապատումն ճշգրտաբանել զեդեալ ի վեր քան զիս գործոյս հարկաւորութիւն, ընդ յորձանս մեծապատումն ծաւալացս նաւեալ մտաւոր ստուգաբանութեամբ, հասից բարեխօսութեամբ սրբոց՝ յանալէկոծ և յապահով նաւահանգիստն:

Օրհնեալ է Աստուած:

72. Հոս ևս Նորայր և Տփղ. տպ. պակաս մը կը կարծէ, որուն չենք համաձայնիր, իսկ նոյն բանասիրին յառաջ բերած ընթերցուածներուն կարգը՝ շատ խառնակ է և բոլորովին անկապ, և բացարձակ անհրաժեշտութեամբ թողլի.
73. Բոլոր ձձ. օր. «որք»,
74. Էջմ. օր. «նաւաստեալ» (սխալ), իսկ Սք. Պարոնեան, ինքնագլուխ կը գրէ «որք նպաստեն» հակառակ բոլոր գրչագրաց, ընդդէմ իմաստին՝ և հայերէն լեզուին կանոնաւոր շարադրութեան կարգին.

հյրկ. Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

## ՎԻՐԱՒՈՐ ԱՂՕԹՔ

Ցոլացող կրակն ի՜նչ պատկերով տրոփուն սրտէն
Իրիկնաբոյր կը յայտնըւէր անդոհանքին,
Անհուն աչքեր որոնք Երազը կը դիտեն
Ու ձեռքեր ջինջ ուր բանտըւա՜ծ է որբ հոգին:

Երկարելով ինչպէս թելեր խօ՜լ կըկոցէն
Որ գիծ առ գիծ կը զարդարեն Երկն հիւսուածքին,
Դէմքը տակաւ կը խոնարհէ՞ր կարօտագին
Ու կը լուսնա՞ր ու կը ժպտէ՞ր վշտին բոցէն:

Մոռցաւ իր շուրջը դալուկէն ա՜լ զարնըւած
Ամէն տեսիլ եւ ամէն շունչ եւ ամէն լաց,
Ու գոց աչքերն անկարելի աղօթքի պէս:

Իր հոգւոյն վրայ ծուլուեցան մռա՜յլ թախանձօրէն
Երբ ալ թօշնա՜ծ էր լոյսին մէջ ամէն պարտէզ
Ու ցայգն իջա՜ծ էր աստղերու թարթիչներէն:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ